# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՆՀԾԿՀ-18/1-ԳՀԱՇՁԲ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N1 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան «24» «10» 2018թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն ի դեմս հանձնաժողովի գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կապալառու) մյուս կողմից, (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով 02.07.2018թ. կնքված ՆՀԾԿՀ-18/1-ԳՀԱՇՁԲ կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 1-ին ենթակետը՝ կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 5.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   5.1 «Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2689959 (երկու միլիոն վեց հարյուր ութսունինը հազար ինը հարյուր հիսունինը) ՀՀ դրամ, որից 448326 (չորս հարյուր քառասունութ հազար երեք հարյուր քսանվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն»:
2. Պայմանագրի N1 հավելվածի Նախահաշիվ №2-1-ի 26-րդ տողում «1.2» թիվը փոխարինել «0.329» թվով:
3. Պայմանագրի մնացած դրույթները թողնել անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

   Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
5. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | «Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ» ՍՊԸ |
| ք. Երևան, Սարյան 22 | Կոտայքի մարզ, ք. Աբովյան 2 Մ/Շ 29-1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչ. | |
| Հ/Հ 900011183010 | Հ/Հ 11500601001710 |
| | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02531594 | ՀՎՀՀ 03535122 |
| Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան | Տնօրեն՝ Ս. Ախազյան |
| ____________________ /ստորագրություն/ Կ.Տ. | ____________________ /ստորագրություն/ Կ.Տ. |